

2461

282

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՆԸԼԻՊԱԿԵՆՆԵՐ

ՀԱՅՈՒԿԵԱՑ ԽՆԱՍԱՑԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.



ՆՈՐ ՆԸԼԻՊԱԿԵՆՆԵՐ

ի Տպարանի Սերովբէի Յարութիւնեան

1882.

13940

~~2461~~

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

13940

ՆՈՐ ՆԱԽԳԵՒՆԻ


ՀԱՅՈՒՅԻՆ ՆԱՍՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՆՈՐ ՆԱԽԳԵՒՆԻ

ի Տպարանի Սերովբէի Յարութիւնեան

1882.



ՆԱԽԵՆԳԻՏՆԵԼԻՔ.



որ Նախիջևան քաղաքի աիկնայք՝ բարեգործութեանց առ Հասարակ ի բողոք սրտէ փափագողներ լինելով՝ չէին խնայած ցայսօր իրենց աուրքերը տեղւոյս Քարեգործական և Մարդասիրական Ընկերութեանց նուիրելու, ինչպէս նոցա անդամութեան անուանց ընդարձակ ցանկն կապացուցանէ. չէին խնայած նոքա նաև իւրեանց աշխատութիւնն գործադրելու տեղւոյս Թատրոնասիրաց ընկերութեան ջանքերը յաջողութեամբ պսակելուն, մանաւանդ ազգայնոց օգնութեան և օգտին Համար նուիրաբերութիւնների ժողովիւրն: Սակայն այս ամենայն, իբրև մասնաւոր դէպքեր, չէին կարող նոցա բարեսիրութեան բաղձանքը դոհացընելու և պսակելու: Աւստի, իբր ազգային լրագրութեան միջոցաւ Հրատարակուեցաւ Առստանդնուպօլսոյ, Տփլիսու և այլ տեղերի կանանց առանձին և անկախ կերպով ազգային գործողութեան ասպարէզ իջնելն, զարթեցաւ և քաղաքիս կանանց սեռի բարի նախանձն իւրեանց մէջ ևս մի յատուկ ինամատար ընկերութիւն կազմել և որոշակի նպատակ ընտրել իւր բարեգործութեանց՝ թէ տեղւոյս և թէ շրջակայ Հայաբնակ գիւղերի չքաւոր աղջկանց կրթութիւնն ու դաստիարակութիւնը: Եւ յիրաւի, տղայոց զբա-

րոյններ՝ Ճիսական, միջնակարգ և արքունի, շատ են մեր մէջ. աղջկանց միայն կարողաւորների և ընտրեալների համար, պրոգրիմնագիան և Արեւիկանց ուսումնարանն բաց. իսկ չքաւորների համար վարժարան, ուր որ կարողանային նորա դաստիարակութիւնը ստանալ ձրի, ստանալ նաև կոշիկ, հագուստ, դասական պիտոյքներ և եթէ կարելին է կերակուր ևս, չկար և ոչ մի, չկար և հագողութիւն յատուկ այդ մասին:

Այս ամենը ի նկատի առնելով, Նոր Նախիջևեան քաղաքիս բնակչուհի 45 տիկնայք և օրիորդք տարւոյս Մայիս ամսոյ 10 դիմեցին իւրեանց Առաջնորդական Փոխանորդ Սրբազան Սուքիաս եպիսկոպոսին և խնդրեցին, որ իւրեանց կազմած և մատուցած «Հայուհեաց խնամատար ընկերութեան» Աստուածատուութիւնը բարեհաճի սուաջարկել Րաբձրագոյն իշխանութեան վաւերացուցմանն ու հաստատութեանը:

Նորին Վերապատուութիւնն իւր կողմանէ սուաջարկեց զայն ի անօրէնութիւն թակմակալ Առաջնորդ Սրբազան Սակար արքեպիսկոպոսի, իսկ նա մատուցած է ի հաստատութիւն Ալեհախառ Հայրապետի ազգիս:

Նորին Օծութիւնն, որ սովոր է հայրական օրհնութեամբ և յորդորական խրախուսութեամբ քաջաբերել և արծարծել իւր հոգեւոր գաւակաց սրտի և հոգւոյ մէջ բարեգործութեան եռանդն ու ազգասիրութեան կայծակը, Նախիջևեանի կանանց ընկերութեան կանոնադրութիւնը ստանալովը, խիտն և եթ

հաստատեց զայն իւր օրհնարել կոնդակովը, որ յ7 Յունիսի համարու 254, և իրաւունք տուաւ ընկերութեան Ճիսական հոգեւոր վարժոյններ բանալ և իգական սեռի կրթութեանը խնամ տանել, որքան ընկերութեան միջոցները զօրեն՝ թէ քաղաքիս մէջ և թէ շրջակայ հայաբնակ զիւղերում կամ քաղաքներում:

Հայրապետի պատուական Արեւիկի Հանդիսաւոր ընթերցումը և ընկերութեան խորհրդի անդամոց ընտրութիւնը յիսաաձգեցաւ մինչև Սեպտեմբեր ամիս, որովհետև քաղաքիս ակննաւոր դերդատաւանների տիկնայք և օրիորդք, որոց թուոյն մէջ խնդրատուներէն շատերն օրախոխութեան համար կրգտնուէին ազարակներում և ամարանոցներում. Սեպտեմբեր ամսոյ 19-ին կիրակի սուաւօտ հրաւիրուեցան Վերապատիւ Սուքիաս եպիսկոպոսի առանձին հրաւիրադրովը 200-ի մօտ տիկնայք և օրիորդք գալ ի սուրբ Աստուորիչ աւաղ եկեղեցին, ուր Սրբազան փոխանորդը Աստուածընտիր Հայրապետի բարձր բարեհաճութեան և հայրական օրհնութեան և քաջալիրութեան թուղթը պատշաճաւոր յարգանօք կարդալով բազմաթիւ աղօթաւոր արանց և կանանց ներկայութեանը յարմարաւոր և սղգու բանախօսութեամբ բացատրեց նոցա Ալեհախառ Հօր Արեւիկի միաբը և թէ ինչ արդիւնքներ կրնայ ունենալ անդոյս Հայուհեաց խնամատար ընկերութիւնը, կրք կանոնաւոր եղանակաւ սկսէ և յսուաջ վարէ իւր գործերը, և կրք ամենայն բանխմաց որ համակրէ և գործակից լինի նորան:

Նոյն օրը ժամը 3-ին յետ կէս աւուր, թէ և եղանակի յանկարծական փոփոխութիւնը և յորդահոս անձրևը բաւականին արգելք հանեց կանանց միասին ժողովելուն՝ ընկերութեան վարչութեանը անդամներ ընտրելու համար, բայց և այնպէս ընկերութեանը արդէն անդամակից գրուող տիկնանց մեծամասնութիւնը՝ Թեմական Ղապրանոցի մեծ դահլիճը գաղով, ընդ նախագահութեամբ Վերապատիւ Սուքիաս կախիկոպոսի, կանոնաւոր քուէարկութեամբ և ձայնից բացարձակ առաւելութեամբ ընտրեց յետագայից ընկերութեան վարչութեանը անդամներ. ա. տիկին Շահպատկան Երանուհի Սիմէոնեան, Բ. տիկին Տրապիզոնեանց Լուսիկ Յովհաննիսեան, Գ. տիկին Բերբերեան Բերսաբէ Պողոսեան, Դ. տիկին Ելաձալեանց Վատարինէ Սերոբեան, Ե. օրիորդ Թամազեանց Ովաննա, Զ. տիկին Նիվիլէիեանց Վատարինէ Վարապետեան և Է. տիկին Նազրեանց Ղըշեուհի Մանուկեան. իսկ նոցա անձնափոխանորդներ. ա. տիկին Մահտեսեանց Նիկտարինէ Թագէտեան, Բ. տիկին Նաբանդեանց Բերսաբէ Մկրեան, Գ. տիկին Խաթրանեանց Նունէ Յակոբեան և Դ. տիկին Շափովալեանց Եղիսաբէթ Յակովբեան:

Սկիզբն առնելով տիկինները՝ նոյն Սեպտեմբեր ամսոյ 22-ին Սրբազան փոխանորդի հրաւիրազրով և նորա նախագահութեամբ կազմելով իրենց առաջին ժողովը, նախ՝ ընտրեցին իւրեանց մէջէն Լուսինապետ տիկին Շահպատկան Երանուհին, Փոխապետնապետ տիկին Բերբերեան Բերսաբէն, Ղան-

ձապահ տիկին Տրապիզոնեան Լուսիկն և Լուսինադպիր տիկին Ելաձալեան Վատարինէն. երկրորդ՝ որոշեցին անձնափոխանորդներին համարել վարչութեան անդամակիցներ. և երրորդ՝ ստացան Վերապատիւ Սուքիաս կախիկոպոսէն «ձայուհեաց խնամատար ընկերութեան վերաբերեալ անդամոց ստորագրութեան մատեանն» հանդերձ դրամական հաշիւներով, պաշտօնական թղթեր և Սկիզբաբառ ձայրապետի Սոնդակնու հաստատած կանոնադրութիւնը, որով սկսեցին իւրեանց անկախ գործունէութիւնն յառաջ տանել յօգուտ ընկերութեան համաձայն բառական մտաց հրահանգին:

Ձայուհեաց խնամատար ընկերութեան յոյսը մեծ է, որ Նախիջևանի հեռաբնակ և մերձաւոր բարեգութ տիկնայք և օրիորդք չեն դանդաղել իրենց ձեռնտուութիւնը և օգնութիւնը ցոյց տալ դրամական նուիրանօք: նոյնը կրօթարին առնել և մեր ձայրապետն աշխարհի քաղաքների և աւանների կանայք, որով մեր տարանջատ, հեռաւոր բնակութեան և առանձնութեան միջի ձիգ տարածութիւնը սիրոյ և համակրանաց միութեամբ անբաժան շղկապել: Օրհնէ թող որբոց և այրեաց ամենաբարձրեալ ձայնն ընկերութեանս ձեռնարկութիւնը և զօրութիւն պարգևէ գործող անձանց առ ոչինչ համարել ամենայն սովորական արգելքներ և սրտի մտօք յառաջ տանել իւր գործերը յօգուտ ազգիս չբաւոր զաւակաց:

Նախագահ Խորհ. Սարգս. Ս. Երչութեան Ե. Շահպատկեան.

Լուսինադպիր Ա. Ելաձալեանց.

Աւելորդ ոչ համարեցաւ հրատարակել աստանօր զընդ ընդ կանոնա-
գրութեան ընկերութեանս յընդհանուր տեղեկութիւն և Աւհասիան
Հայրապետի օրհնարէր Կննդակը որով օրհնած էր Նա մեր այս ազ-
գային ձեռնարկութիւնը :

Պէտքէ ծառայ Վրդեպոսի և անհասանելի կամօքն
Լապո-ժոյ Եպիսկոպոսապետ և Ասիո-դիկա ամենայն
Հայոց Օսայրաբոյն Պատրիարք համազգայն նախած շար
Ընտոյ Երարաբեան Երապետական Մայր Եկեղեցոյ
Սրբոյ Ասիո-դիկէ Եջմեաժնի . Հոգեզարդեալ տիկնայց
Հայուհեաց Նոր Նախիջևանու անդամոց ինամատ
տար ընկերութեան սիրելի և հարազատ որդւոց Մայր
Ըթուոյս ողջոյն և աստուածային օրհնութիւն :

Եռանդն բարեպաշտութեան առաքինանալոյ յան-
ձինս ի փառս մեծին Աստուծոյ շարժեալ ի ձեզ
ներգործութենէ Հոգւոյն սրբոյ հաստատեալ էք ըն-
կերակցաբար ինամատար հանդիսանալ չքաւոր հայ
աղջկանց քաղաքիդ Նոր Նախիջևանու նպատակ կալ-
եալ ձեզ ի մեծի գործոյդ հանրացուցանել զմտաւո-
րական լուսաւորութիւն զիտութեան և զհայկական
զգացմունս յիդական սեռս ոչ միայն քաղաքիդ այլ
և որ ի շրջակայս են հայաբնակ զիւզորայք բա-
նալով ուր հարին է զձեռնական հոգւոր դպրոցս և
պահպանելով զայնս ի հաշիւ ձեր :

Աստուածատէր դասերք մեր , եթէ ի մարդկայինս
իցեն գործք Աստուծոյ սիրելիք , և ըստ մեծի զթու-
թեանն նորա վարձատրելիք փառաւորութեամբ , են
արդարեւ գործքն որ յօգուտ ըստ մարմնոյ և ըստ

հոգւոյ գործեն մարդկութեան . զի որպէս ի գործս
փրկչին մերոյ չեղն յաչս ամենայն մարդկան երկիւ-
ղածութեան և մեծի փառաւորութեան արժանի բան
զչնորհին կուրաց զտեսութիւն , և մեռելոց զկենդա-
նութիւն , այսպէս և չեք ինչ առ Աստուծոյ պա-
տուեալ և սիրեցեալ քան զինամատարն լինել կա-
րօտելոց՝ ձեռն տուեալ նոցա լուսաւորութեան մտաց
և բարոյական զարգացման :

Այսր գեղեցիկ գործոյս և մեծի նպատակիս եղէք
և դուք հանդիսաղիքք , իբրև մարս ընտիրս ընծայ-
եալ Աստուծոյ վերածնել ի ինամն ձեր զմանկունս
եկեղեցւոյ ի կատարելութիւնն , որով զարդարեաց
Աստուածային տեսչութիւնն զմարդն առաջին . և ո՞
երկմտեսցի ընդ փառս զոր դովաւ Աստուած զան-
ձեցիք , և զոր ընդ Աստուած զրկախառնեալ ունիք
վայելել անդրաւ ուրախութեամբ : Այլ քանզի ա-
մենայն գործք լինին պատուեալք , յորժամ յարատե
է և անընդհատ , յորժամ , որք գործենն , ամենայն
քաջութեամբ զիմադրաւեալ դժուարութեանց ածեն
հասուցանեն զայն ի կատար , վասն որոյ ի սոյն հաս-
տատամիտս առնելոյ զբարեպաշտութիւն ձեր Հայ-
րական սիրով յորդորեմք զձեզ իբրև նոր իմն առաք-
եալ լինել ի նպատակիդ՝ քարոզել և համոզել և
զնոսս ի գործակցութիւն , որք արտաքոյ են տակա-
ւին ի միաբանութենէդ առաջի եղեալ նոցա ոչ
միայն զօգտակարութիւնն որ ըստ մարմնոյ վայելելոց են
ի կենցաղումն երախտապարտ զգացմամբ սրտից բա-
րեւրելոց անմահ իմն յիշատակութեամբ , այլ և որ

առ Աստուած են մեծութիւնք և փառաւորութիւնք, բանդի և այս աստուածասիրաց է իւրոց բարեաց և զայլս հաղորդակիցս առնել:

Օ այս ամենայն ծանուցանելով բարեպաշտութեան ձերում և հաստատելով զկանոնադրութիւն ընկերութեանդ՝ օրհնեմք զհամախմբութիւնդ՝ որ ի փառս Աստուծոյ խմբեալ էք անձնանուէր յօժարութեամբ: Օրհնեմք և զնպատակ ընկերութեանդ, որ սուրբ և բան զամենայն առաքինութիւնս գերազանցեալ յԱստուած, և մաղթեմք յԱստուծոյ զօրակեան իննել ձեզ ի դործդ, յոր ձեռնարկեալ էք յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց: Տացէ ձեզ Տէր տեսանել և վայելել ուրախութեամբ զարդիւնս փաստակոց ձերոց, զի ցնծացեալ բերկրեալիք իբրև մշակք աշխատեալք ի հունձս Տեստն, անխալեալ երկնաորին վարձատրութեան:

Աղջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց Աորա և ի մէնջ Մ.մէն:

Գեորգ Գ.

Սախալիս ամենայն Հայոց:

Թ. 254.

ՅՂ Երևանի 1882 ամի.

Ըստ Տուճարիս ՌՅԼԸ.

Ի Ս. Էջմիածին:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՆԱՆԻ ՀԱՅՈՒԷՆԱՅ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Ա. Ընկերութեան նպատակը.

1. Նոր Նախիջևանի Հայոց Հեաց Խնամատար Ընկերութեան նպատակն է՝ օգնել իզական սեռի լուսաւորութեան դործին՝ ա) բանալով ազգկանց Ծխական Հողեր գպրոցներ քաղաքիս և շրջակայ հայաբնակ գիւղերի մէջ և պահպանելով նորանց իւր հաշուով. բ) իւր միջոցներովը նպատակել արդէն և դաժ թէ արքունի և թէ ազգային օրիորդական վարժարաններում ուսանող չբաւոր հայ ազգկանց, և գ) օգնել այն անձանց՝ որք կցանկան պատրաստուիլ Հայոց ծխական գպրոցների մէջ ուսուցչի պաշտօն կատարել:

Բ. Ընկերութեան կառավարչութիւնը և հասոյնները.

2. Ընկերութեան կազմողներն են՝ Հիմնադիր, մշանջնաւոր, պատուաւոր և տարեկան անդամները, որոց թիւը սահմանափակուած չէ:

3. Ընկերութեան նիւթական կարողութիւնը կրկայացնեն. ա) Հիմնադիր և մշանջնաւոր անդամների միանուագ նուէրները. բ) պատուաւոր և տարեկան

անդամների վճարները. 4) այլ և այլ անձինքների, եկեղեցիների, վանքերի և այլ հաստատութիւնների ընծաներն՝ թէ՛ դրամով լինին, և թէ՛ այլ պիտոյքներով, կարասիքներով կամ զրքերով և 5) ընկերութեան կամ այլոց կարգադրութեամբ տրուած թատերական ներկայացումների, պարահանդէսների, դրականական երեկոնների, դասախօսութիւնների և այլ հրապարակական արարուածների եկամուտը:

4. Ընկերութեան գումարները կզահպանուին արքունի կամ քաղաքի հասարակական դրամանոցում ընկերութեան անունով, և կրնան յետ ստացուիլ միմիայն նորա կարգադրութեամբ. իսկ գանձապահի մօտ ընկերութեան խորհրդի որոշմամբ կրման այնպիսի գումարներ, որոնք հարկաւոր են ընթացիկ ծախուց համար:

Գ. Անդամները ընտրութիւնը, նոյա երասունները և պարտաստութիւնները.

5. Հիմնադիր անդամք կատուին այն անձինք, թէ՛ իգական և թէ՛ արական սեռի, որոնք կյօժարին ընծայել միանուագ կենդանութեան ժամանակ կամ մահուանէն կտքը, ընկերութեան կազմակերպութեան համար մէկ նշանաւոր գումար ոչ պակաս քան **1000** բուբլի: Մոցա անուամբ բացուած դպրոցներում կրպահպանուին սաներ ընկերութեան խորհրդի որոշմամբ:

6. Մշանջնաւոր անդամ կհաշուին այն անձինք, որոնք միանուագ կրնուիրեն ընկերութեանը **100** բ.: Սոքա իրաւունք ունին մէկ ձրիավարժ սան սուաջար-

կելու ընկերութեան խորհրդին: Հիմնադիր և մշանջնաւոր անդամների նուէրներն, նոյնպէս և պատուաւոր և տարեկան անդամների վճարների մէկ քաւորդ մասն անձնուսուխի են և շահեցողութեան համար կըդրուին արքունի կամ հասարակական դրամանոց:

7. Պատուաւոր անդամ կհամարուին այն անձինք, որոնք կնուիրեն ընկերութեան տարեկան վճարի կրկնապատիկը կամ աւելի դրամ. այսինքն ամ ըստ ամէ **10** բուբ.:

8. Տարեկան անդամ կհամարուին այն անձինք, որոնք կհատուցանեն ընկերութեան ամէն տարի **5** բուբ. վճար: Պատուաւոր և տարեկան անդամները իւրեանց հասոյթները պարտաւոր են յատկացուլ ժամանակին վճարել առանձ յետաձգութեան:

Դ. Ընկերութեան վարչութիւնը.

9. Ընկերութեան գործերի կառավարողն է վարչութեան խորհուրդը, որ կբաղկան այ հիմնադիր, մըշտընջնաւոր, պատուաւոր և տարեկան անդամների ընդհանուր ժողովէն ընտրուած կօթն անձինքներէ: Խորհուրդն ինքն իւր անդամոց մէջէն կընտրէ իւրեան ատենապետ, փոխատենապետ, գանձապահ և ատենադպիր, առանձ կտրութեան սեռի: Խորհրդի կօթն անդամներն ունին չորս անձնատիրականորդներ (կանդիրատ), որոց յատուկ պարտքն է ամէն ժամանակ վերահասու լինել խորհրդի զործողութեանց և ստուգել դրամական հաշիւներն:

10. Խորհրդի անդամներին և նորանց փոխանորդներին զաղանի քուէարկութեամբ կընարէ և կհաստատէ ընկերութեան ընդհանուր ժողովը չորս տարի ժամանակաւ: Խորհրդի անդամներն վերընտրելի են միայն երկու անգամէն ոչ աւելի:

11. Աթէ Խորհրդի անդամներէն մէկը հեռանայ, կամ երկարատե հիւանդութիւն ունենայ և կամ գործով քաղաքէն բացակայ գտնուի, նորա տեղն կառնու առաւել քուէ ստացող փոխանորդն:

12. Խորհրդի ժողովը կզումարուի հարկաւոր համարուած ժամանակին ատենապետի հրաւիրողով: Ամէն ամիս անշուշտ ժողով պէտք է լինի ընկերութեան մուտքը և ծախքը վկայաբանելու համար: Նիստերի վճիռները կարձանագրուին առանձին մատուցում, որին կստորագրեն ներկայ եղող անդամները:

13. Խորհրդի մէջ բոլոր գործերը կըվճուին ձայների առաւելութեամբ. իսկ ձայների համահասարակ ժամանակին նախապատիւ կհամարուի ատենապետի կողմը: Խորհրդի մէջ կայացած վճիռների օրինաւորութեան համար հարկաւոր է անդամների չորսի ներկայութիւնն:

14. Խորհրդի պարտաւորութիւններն են. ա) աշխատել ընկերութեան անդամների թիւն և դրամական միջոցները աճեցնել. բ) օգնել և հսկել այն դպրոցների բարելաւութեանը, որոնք կամ նպաստ են ստանում ընկերութենէն և կամ պահվում են նորահաշուով. գ) հսկել ընկերութեան դրամների և դոյ-

քերի ամբողջութեանը իւր պարտաւորական պատասխանատուութեամբ և դ) պատրաստել ընկերութեան տարեկան գործունէութեան ծրագիրն և ապագայ տարւան ծախսերի հաշուէկշիռն և այդ ամենը ներկայացնել ընդհանուր ժողովին վաւերացնելու:

15. Խորհրդի իրաւունքներն են՝ ա) թէ դրամով և թէ գոյքերով օգնել իւր հովանաւորութեան ներքոյ գտնուած հայ օրիորդական դպրոցներին, կազմուած և վաւերացած նախահաշուին համաձայն, բնակին չշեղուելով նոյն հաշուէկշիռէն և ոչ մէկ կույ գործադրել որ և է ամենակարևոր դէպքերի ժամանակ. բ) ընդունել և հաստատել պատուաւոր և տարեկան անդամներին և գ) հարկ եղած միջոցներով իշխանութեան օրինական թոյլտուութեամբ, ընկերութեան օգտին կազմել նուազահանգէսներ, ներկայացումներ, պարահանգէսներ, դասասիտութիւններ, վիճակահանութիւններ, զրականական երեկոներ, խնջոյքներ և այլն:

16. Խորհրդի ատենապետի պարտքն է հսկել՝ որ ձշտութեամբ կատարուին այս կանոնագրի յօդուածներն, ընդհանուր ժողովի և Խորհրդի բոլոր վճիռները: Նա կիստարէ բոլոր դրամոր և բանաւոր հաղորդակցութիւններն որ և է հաստատութեանց կամ պաշտօնական անձինքների հետ: Ատենապետի բացակայութեան ժամանակ այդ իրաւունքներն և պարտքերն անցնում են փոխատենապետին:

17. Գանձապահը կպահպանէ ընկերութեան դրամական հաշիւներն արձանագրելով նրանց Խորհրդէն ստացած ժապաւինած մատուցում, կընդունի տարե-

կան վճարներն և նուէրները՝ տալով անդորրազիր ատենապետի ստորագրութեամբ և ընթացիկ ծախսերն կհոգայ խորհրդի կարգադրութեամբ:

18. Մտենադպիրն կարձանագրէ ընդհանուր ժողովի և խորհրդի նիստերին առարկայ համարուած վճիռներն և կկատարէ նորա ամենայն գրազրութիւնները: Նորա ձեռքն է զիւանն, գործերն և ընկերութեան կնիքն: Մտենադպիրն իւր աշխատութեանց համաձայն կարող է ստանալ վարձ ըստ որոշման խորհրդի:

Ե. Ընդհանուր ժողով:

19. Ընդհանուր ժողովները կլինին տարեկան և անակնկալ: Տարեկան ժողովները կհրաւիրուին ամեն տարի Փետրուարի սկզբում՝ ա) քննելու տարեկան ել և մտից հաշիւներն և հաստատելու. բ) խորհրդի անդամներն ընտրելու և հաստատելու և գ) խորհրդի կամ անդամների առաջարկութիւններն քննելու և հաստատելու, նաև նորանոր դպրոցների բանալու, եղածներն բարեկարգելու և կամ ընկերութեան կայքերի աննելու և ծախելու մասին: Իսկ անակնկալ ժողովները կհրաւիրուին խորհրդի որոշմամբ, կամ հարկը պահանջած ժամանակ և կամ երբ քսան անդամների ստորագրութեամբ գրաւոր առաջարկութիւն կլինի խորհրդին այնպիսի ժողով կազմելու համար: Ընդհանուր ժողովի կայանալու մասին առանձին գրով խորհրդի նախագահի կողմանէ կձանուցուի օր յառաջ ընկերութեան բոլոր անդամներին, որոնք Նախ-

13970

իջլանում են, կամ մերձակայ զիւղերում և բազաքներում:

20. Ընդհանուր ժողովն կայացած կհամարուի երբ ներկայ եղող անդամների թիւն պակաս չէ Նոր Նախիջլանում բնակվող անդամոց մէկ քառորդ մասէն: Եթէ ընդհանուր ժողովը չկայանայ որոշուած թուով անդամներ չգտնուելուն պատճառաւ, տասն օրէն յետոյ առանձին ծանուցադրով կհրաւիրուի երկրորդ ժողով, և այսպիսի երկրորդական ժողովի նիստերն օրինաւոր կլինին, երբ որքան և իցէ անձինք Նախիջլանաբնակ անդամներէն ներկայ գտնուին, սոյն թուոյն մէջ հաշուելով նաև խորհրդի անդամներին:

21. Ընդհանուր ժողովի մէջ խորհրդի անդամները միւս անդամների հետ հաւասար ձայն ունին: Բացակայ անդամներն կարող են իւրեանց ձայնն տալ ներկայ եղողներէն որուն կկամենան, գրաւոր յանձնարարութեամբ, եթէ ժողովի վճիռներին ենթակայ եղող խնդիրներն յայտնի են և իւրեանց կարծիքը որոշակի բացատրուած են յանձնարարական գրի մէջ, սակայն մէկ անդամն երկու անձինքների ձայնից աւել չէ կարող ձայն ներկայացնել ժողովին: Ընդհանուր ժողովի նիստն նախապէս կընտրէ իւր նախագահն, որ կընայ և կկառավարէ ժողովն:

22. Ընկերութեան տարեկան հաշիւներն կհրատարակուին ազգային լրագիրներու մէջ և կամ առանձին տետրակներով, որոց մի մի ձեռագիր օրինակը կներկայացուի ամենայն Հայոց Օսայրագոյն Պատրիարք Աթողիկոսին ի ձեռն Ա իձակիս Թեմակալ

3

առաջնորդին, կամ ի դէպս բացակայութեանն՝ Արքեպագան Սինօզին Արքայ Լճմիաճնի և Վիճակային Առնսիստորիային Հայոց Նոր Նախիջևանի և Ռեսսարաբիոյ:

Չ. Բնկերութեան երաւոնները.

23. Բնկերութիւնն ունի իրաւունք օրինասահման կերպով գնել և ծախել շարժական և անշարժ կարուածներ, կապել պայմանադրութիւններ, դատ բանալ և իւր շահերը պաշտպանել խորհրդի անդամոց և կամ առանձին անձինքների ձեռքով:

24. Բնկերութիւնն ունի իրաւունք բանալ իւր հաշուով իդական սեռի ուսումնարաններ, համաձայն այդպիսի վարժարաններին յատուկ եղած ընդհանուր կանոններին՝ թէ հոգևոր վիճակային իշխանութեան թոյլտուութեամբ և թէ նորա հովանաւորութեանները:

25. Որպէս զի բնկերութիւնն Նոր Նախիջևանէն դուրս ևս յաջողութեամբ համնի իւր կրթական նպատակներին, Հայոց-հեաց Խնամարար Բնկերութիւնը կարող է դիմել այլ դպրոցական մանկավարժական նպատակներին ծառայող սօցիային բնկերութիւնների օգնութեան և իւր կողմանէ ևս տալ նոցա դրամական օժանդակութիւն հարկաւոր դէպքերում:

26. Բնկերութիւնն ունի իւր կնիքը, ուր փորագրուած կլինի Նախիջևանի գեղերը, այսինքն Բեդուայ Գեղանի, իսկ շուրջը «Նոր Նախիջևանի Հայոց-հեաց Խնամարար Բնկերութիւն» փորագրութեամբ և հիմնաւորութեան տարեթուի նշանակութեամբ:

27. Եթէ երբ և իցէ բնկերութիւնն բանայ օրիորդական ուսումնարան, այդ վարժարանի ծրագիրն յօրինելու համար կհրաւիրուին տեղական մանկավարժներ, թէև նոքա չլինին բնկերութեան անդամներ:

28. Եթէ որ և իցէ պատճառով բնկերութիւնը դադարեցնէ իւր գործունէութիւնն, այն ժամանակ նորա բոլոր պատրաստի ունեցած գումարը, գոյքը և կայքը կանցնի ի ժառանգութիւն իւր բացած Հայկական Ծախական հոգևոր օրիորդական դպրոցներին համահասար չափով: Իսկ եթէ առանց վարժարանի բացման պատահի այդ դէպքը, բոլոր ստացուածքն կմնայ ի տիրապետութիւն Նոր Նախիջևանայ և Ռեսսարաբիոյ Հայոց հոգևոր դպրանոցին (Սեմինարիա):

29. Նոր Նախիջևանի Հայուհեաց Խնամատար Բնկերութիւնը կհաստատուի ազգիս Վահագնաւոր Հայրապետէն և նորա բարեհաճութեամբ՝ վիճակաւոր առաջնորդի առաջարկութեան համաձայն, հարկաւորած ժամանակ, կլինին փոփոխութիւններ կանոնադրութեանս յօդուածների մէջ՝ նախընթաց կարգաւորութեամբ ընդհանուր ժողովոյն:

Հաստատուալ Հայրապետական կնքով և կնիքակաւ յ 7-ն Յունիսի 1882 և ՌՅԼԱ Թ. ընդ համարաւ 254.

Սահրամ Եպիսկ. Սահկոնի.

[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL014402

